ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.10.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/231

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
Մասնակից՝ «Արքասիմ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/69» գնանշման հարցման ընթացակարգ, ընդհանուր շինարարական աշխատանքների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/69»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 08.09.2021թ.-ի թիվ 26/26-1/14446-2021 գրությամբ «Արքասիմ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 02.09.2021թ.-ի թիվ Ե/ՎՈՒ/1579-21 գրության հիման վրա, 08.09.2021թ.-ին «Արքասիմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 08.09.2021թ.-ին:

09.09.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/231 համարի ծածկագիրը:

23.09.2021թ.-ին և 08.10.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 23.09.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 08.10.2021թ.-ին:

2. **<u>«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը 02.09.2021թ.-ի թիվ Ե/ՎՈՒ/1579-21 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում ենք, որ 2021թ.-ի հունիսի 3-ին, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում ժամը 13:00-ին տեղի է ունեցել ընդհանուր շինարարական աշխատանքների ձեռքբերման ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/69 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստը, որի արդյունքում ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/69 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից է հայտարարվել «ԱՐՔԱՍԻՄ» ՍՊ ընկերությունը (ՀՎՀՀ՝ 00199063, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Դավիթաշեն.7-րդ փողոց 1/14, հեռ.՝ +374 98 089780, էլ. փոստի հասցե՝ simonyanna93@mail.ru):

«ԱՐՔԱՍԻՄ» ՍՊԸ-ի հետ 2021 թվականի հուլիսի 06-ին կնքվել է թիվ ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/69 կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), համաձայն որի ընկերությունը պարտավոր է եղել Պայմանագրի 1.1. կետով և Պայմանագրի թիվ 1 Հավելված Ծավալաթերթ-Նախահաշվով սահմանված աշխատանքները կատարել Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 40 (քառասուն) օրացույցային օրվա ընթացքում:

Պայմանագրի 8.1. կետի համաձայն Պայմանագիրն ուժի մեջ է մտել ստորագրման պահից և պետք է գործեր մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունը ողջ ծավալով կատարումը:

«ԱՐՔԱՍԻՄ» ՍՊԸ-ն Պայմանագրի 1.1. կետով սահմանված աշխատանքները պարտավոր է եղել սկսել 07.07.2021 թվականից ոչ ուշ և ավարտել 16.08.2021 թվականից ոչ ուշ, սակայն 06.07.2021թվականի թիվ ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/69 պայմանագրի 1.1. կետով սահմանված աշխատանքները Կապալառու «ԱՐՔԱՍԻՄ» ՍՊԸ-ն մինչև այժմ չի սկսել:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում ենք, որ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան" հիմնադրամի և «ԱՐՔԱՍԻՄ» ՍՊ ընկերության միջև թիվ ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/69 պայմանագիրը «Հայաստանի ազգային ագրարային համալսարան" հիմնադրամը 17.08.2021 թվականից միակողմանի լուծել է՝ ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 45-րդ կետով սահմանված պահանջների՝ «ԱՐՔԱՍԻՄ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում ենք Ձեզ՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ սկսելու նպատակով:

Միաժամանակ հայտնում ենք, որ սույն գնման ընթացակարգի շրջանակներում ձեռք բերվող գնման առարկաները ներառված են հաստատված գնումների պլանում:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/69» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Արքասիմ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Արքասիմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 09.09.2021թ.-ին գրությամբ դիմել է «Արքասիմ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.09.2021թ.-ի թիվ 26/26-1/14446-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ չներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում:

4. <u>ՍՑ-LO-2021/231 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Արքասիմ» ՍՊԸ-ի միջև 06.07.2021թ.-ին կնքվել է թիվ «ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/69» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված տանիքի վերանորոգման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

iii. Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է 40 օրացուցային օրվա ընթացքում:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված թիվ 2):

iv. Պայմանագրի հավելված 2-ով սահմանված օրացուցային գրաֆիկի համաձայն՝ աշխատանքների կատարման սկիզբ է համարվում պայմանագիրն ուժի մեջ

մտնելու օրը, իսկ ավարտը՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրացուցային օրվա ընթացքում:

v. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 01.09.2021թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կարիքների համար պետական գնման կարգով կապալային աշխատանքների կատարման 06.07.2021 թվականին կնքված թիվ «ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/69» պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ Կապալառու «Արքասիմ» ՍՊ ընկերությունը պարտավոր է եղել Պայմանագրի 1.1. կետով և Պայմանագրի թիվ 1 Հավելված Ծավալաթերթ-Նախահաշվով սահմանված աշխատանքները կատարելու Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 40 (քառասուն) օրացույցային օրվա ընթացքում:

Պայմանագրի 8.1 կետի համաձայն՝ Պայմանագիրն ուժի մեջ է մտել ստորագրման պահից և պետք է գործեր մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունը ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրին ստորագրվել է և ուժի մեջ է մտել 06.07.2021 թվականին:

«Արքասիմ» ՍՊ ընկերությունը Պայմանագրի 1.1. կետով սահմանված աշխատանքները պարտավոր է եղել սկսել 07.07.2021 թվականից ոչ ուշ և ավարտել 16.08.2021 թվականից ոչ ուշ: Սակայն 06.07.2021 թվականի թիվ «ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/69» պայմանագրի 1.1. կետով սահմանված աշխատանքները Կապալառու «Արքասիմ» ՍՊ ընկերությունը մինչև այժմ չի սկսել:

Պայմանագրի 3.1.4 կետով սահմանված հիմքով 06.07.2021 թվականին կնքված թիվ «ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/69» պայմանագիրը Պատվիրատուն միակողմանի լուծում է 17.08.2021 թվականից:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.09.2021թ.-ի թիվ 26/26-1/14446-2021 գրությամբ «Արքասիմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ հոդվածների համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ

ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված տանիքի վերանորոգման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրը որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունն անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

vi. Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի և «Արքասիմ» ՍՊԸ-ի միջև 06.07.2021թ.-ին կնքված թիվ «ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/69» ծածկագրով պետական գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված տանիքի վերանորոգման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է 40 օրացուցային օրվա ընթացքում:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված թիվ 2): Պայմանագրի հավելված 2-ով սահմանված օրացուցային գրաֆիկի համաձայն՝ աշխատանքների կատարման սկիզբ է համարվում պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը, իսկ ավարտը՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրացուցային օրվա ընթացքում:

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի և «Արքասիմ» ՍՊԸ-ի միջև 06.07.2021թ.-ին կնքված թիվ «ՀԱԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/69» ծածկագրով պայմանագրի շրջանակներում «Արքասիմ» ՍՊԸ-ն չի կատարել կնքված պայմանագրով ստանձնած պարտականությունների ողջ ծավալը, համաձայն որի Պատվիրատուն միակողմանի լուծել է Պայմանագիրը՝ www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 01.09.2021թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Արքասիմ» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանի 01.09.2021թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում նույն օրը հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա, Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Արքասիմ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.09.2021թ.-ի թիվ 26/26-1/14446-2021 գրությամբ «Արքասիմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/231 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Արքասիմ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**